ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. 2025 թվականի հհ շիրակի մարզում իրականացված տնտեսական եվ սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրեր

2025 թվականին Շիրակի մարզում համայնքային զարգացման քաղաքականությունը շարունակվում է Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրերի միջոցով՝ պետական և համայնքային համաֆինանսավորմամբ: Ծրագրերի ոլորտային լայն ընդգրկումը վկայում է, որ մարզը գտնվում է համակարգային ենթակառուցվածքային արդիականացման փուլում, որը նպատակ ունի ապահովել երկարաժամկետ սոցիալ-տնտեսական կայունություն:

2025 թվականին իրականացվել է **36 ծրագիր 124 ենթածրագրերով**, որոնք ընդհանուր արժեքը կազմում է **4,281,260,591 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **2,390,845,200 (55.8%)**:

Ըստ ոլորտների.

Խմելու ջրամատակարարման, ինչպես նաև ջրահեռացման համակարգի կառուցում/նորոգում:

Խմելու ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի զարգացումը հանդիսանում է համայնքային և մարզային զարգացման ռազմավարական հիմնասյուներից մեկը, որը նշանակությունը պայմանավորված է հետևյալով.

- **Հանրային առողջության ապահովում** – անվտանգ և որակյալ խմելու ջուրը և արդյունավետ ջրահեռացումը նվազեցնում են համաճարակաբանական ռիսկերը և առողջապահական ծախսերը:
- **Սոցիալական կայունություն** – կայուն ջրամատակարարումը բարձրացնում է բնակչության կյանքի որակը և նպաստում է բնակավայրերի պահպանմանը, հատկապես սահմանամերձ և գյուղական համայնքներում:
- **Տնտեսական հիմքերի ամրապնդում** – ջրամատակարարման և կոյուղու համակարգերի առկայությունը նախապայման է ներդրումային միջավայրի բարելավման և տնտեսական ակտիվության զարգացման համար:

- **Շրջակա միջավայրի պաշտպանություն** – կազմակերպված ջրահեռացումը կանխում է հողի և ջրային ռեսուրսների աղտոտումը՝ ապահովելով կայուն տարածքային զարգացում։
- **Երկարաժամկետ ենթակառուցվածքային անվտանգություն** – արդիական համակարգերը նվազեցնում են տեխնիկական կորուստները և ապահովում համայնքների ինժեներական կայունությունը։

Արդյունքային ցուցանիշներ.

- Ծրագրից օգտվել է **4477 մարդ:**
- Կառուցվել/նորոգվել է **26.1 կմ** երկարության ջրամատակարարման և ջրահեռացման խողովակաշար։
- Ուղորտում իրականացվել է **7 ծրագիր (16 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **695,196,147 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **480,000,301 դրամ (69%):**
- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Ախուրյան համայնք՝ 2 ծրագիր
    1. Ախուրյան բնակավայրի Նոր Ախուրյան թաղամասի և Չարենց փողոցի, Կրաշեն բնակավայրի կոյուղագծերի կառուցման աշխատանքներ։
    2. Մարմաշեն բնակավայրում խմելու ջրագծի հիմնանորոգման աշխատանքներ։
  - ✓ Արթիկ համայնք՝ 1 ծրագիր
    1. Լեռնակերտ, Պեմզաշեն, Փոքր Մանթաշ, Արևշատ բնակավայրերում խմելու ջրագծերի հիմնանորոգում։
  - ✓ Անի համայնք՝ 2 ծրագիր
    1. Մարալիկ բնակավայրի կոյուղագծերի կառուցման աշխատանքներ։
    2. սահմանամերձ Բագրավան բնակավայրից Անիավան-Անիպեմզա բնակավայրերը սնուցող ջրատարի անցկացում։
  - ✓ Աշոցք համայնք՝ 1 ծրագիր
    1. Ղազանչի, Գոգհովիտ, Զույգաղբյուր և Ցողամարգ բնակավայրերի խմելու ջրագծերի վերանորոգման աշխատանքներ։
  - ✓ Ամասիա համայնք՝ 1 ծրագիր

1. Ամասիա բնակավայրի Հայասա թաղամասի խմելու ջրագծի վերանորոգման և վերակառուցման աշխատանքներ։

- Ապահովվել է անվտանգ խմելու ջուր և նվազեցվել առողջապահական ռիսկերն։
- Նվազեցվել են տեխնիկական կորուստները և ապահովվել երկարաժամկետ կայունություն։

Ոլորտը ունի ոչ միայն սոցիալական, այլև երկարաժամկետ տնտեսական և անվտանգության ռազմավարական նշանակություն մարզի զարգացման համար։

Ոռոգման համակարգերի կառուցում/նորոգում

Ոռոգման համակարգերի կառուցումն ու նորոգումը Շիրակի մարզի համար ունի առաջնային ռազմավարական նշանակություն՝ հաշվի առնելով գյուղատնտեսության բարձր տեսակարար կշիռը մարզի տնտեսական կառուցվածքում, որի նշանակությունը պայմանավորված է հետևյալով.

- **Գյուղատնտեսական արտադրողականության բարձրացում** – կայուն ոռոգումը ապահովում է բերքատվության աճ և նվազեցնում կլիմայական ռիսկերի ազդեցությունը։
- **Պարենային անվտանգության ամրապնդում** – արդյունավետ ոռոգման համակարգերը նպաստում են տեղական արտադրության ավելացմանը։
- **Գյուղական բնակչության եկամուտների կայունացում** – ոռոգվող հողատարածքների ընդլայնումը մեծացնում է գյուղացիական տնտեսությունների շահութաբերությունը։
- **Տարածքային զարգացման հավասարակշռում** – ոռոգման ենթակառուցվածքների զարգացումը հատկապես կարևոր է սահմանամերձ և լեռնային համայնքների տնտեսական կենսունակության պահպանման համար։
- **Երկարաժամկետ տնտեսական կայունություն** – գյուղատնտեսության արդյունավետության բարձրացումը ստեղծում է հիմք վերամշակող և ագրոբիզնես ոլորտների զարգացման համար։

Արդյունքային ցուցանիշներ.

- Ծրագրից օգտվել է **690 տնային տնտեսություն,**
- Ոռոգելի հողարատարծքը՝ **560 հա։**
- Կառուցվել/նորոգվել է **7 կմ** ոռոգման ցանց։

- Ոլորտում իրականացվել է **2 ծրագիր (3 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **270,983,687 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **177,281,700 դրամ (65.4%):**
- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Ախուրյան համայնք՝ 1 ծրագիր
    1. Բասեն բնակավայրի ոռոգման ցանցի հիմնանորոգման աշխատանքներ:
  - ✓ Արթիկ համայնք՝ 1 ծրագիր
    1. Անուշավան և Վարդաքար բնակավայրերի ոռոգման համակարգերի կառուցում:
- Ապահովվել է գյուղատնտեսական արտադրանքի արդյունավետ ջրամատակարարում, նվազեցվել ջրամատակարարման կորուստները և բարձրացվել հողի հուսալի բերրիությունը:
- Նվազեցվել են սպասարկման ծախսերը և ապահովվել երկարաժամկետ տեխնիկական կայունություն

Ոռոգման համակարգերի զարգացումը հանդիսանում է ոչ միայն գյուղատնտեսական, այլև ամբողջ մարզի տնտեսական կայունության ռազմավարական գործոն:

Բնակավայրի փողոցների կառուցում/նորոգում ասֆալտապատմամբ

Բնակավայրերի փողոցների կառուցումն ու նորոգումը ասֆալտապատմամբ հանդիսանում է համայնքային ենթակառուցվածքային զարգացման առանցքային ուղղություններից մեկը, որը պայմանավորված է հետևյալով.

- **Տնտեսական ակտիվության խթանում** – բարելավված ճանապարհները նվազեցնում են տրանսպորտային ծախսերը, հեշտացնում ապրանքների և ծառայությունների շրջանառությունը և նպաստում տեղական բիզնեսի զարգացմանը:
- **Տարածքային կապակցվածության ուժեղացում** – ապահովվում է բնակավայրերի ներքին և միջհամայնքային հաղորդակցությունը, ինչը կարևոր է մարզի համաչափ զարգացման համար:
- **Գյուղատնտեսական արտադրանքի շուկա հասանելիություն** – ճանապարհների բարելավումը հեշտացնում է գյուղատնտեսական արտադրանքի տեղափոխումը և իրացումը:

- **Սոցիալական հասանելիության բարձրացում** – բարելավվում է բնակչության հասանելիությունը կրթական, առողջապահական և վարչական ծառայություններին:
- **Երկարաժամկետ ենթակառուցվածքային կայունություն** – ասֆալտապատ ճանապարհները ապահովում են ավելի երկար շահագործման ժամկետ և նվազեցնում սպասարկման ծախսերը:

Արդյունքային ցուցանիշներ.

- Կառուցվել/հիմնանորոգվել է **12.6 կմ** երկարությամբ ճանապարհ, ասֆալտապատված մակերեսը՝ 55513 մ², և մայթերի մակերեսը՝ 5750 մ²:
- Ուղորտում իրականացվել է **8 ծրագիր (21 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **1,457,207,099 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **656,443,300 դրամ (45%):**
- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Ախուրյան համայնք՝ 3 ծրագիր
    1. Կրաշեն, Ջաջուռավան, Մեծ Սարիար բնակավայրեր տանող ավտոճանապարհի հիմնանորոգում և ասֆալտապատում:
    2. Հովունի բնակավայրի Սբ. Աստվածածին տանող ասֆալտապատում:
    3. Ախուրյան բնակավայրի Մինաս Ավետիսյան 1-ին, 2-րդ, 3-րդ նրբանցքների,Եղիշե Չարենց, Կոմիտաս, Պարույր Սևակ, Ախուրյանի խճուղի 2-րդ փողոցների ասֆալտապատման աշխատանքներ:
  - ✓ Արթիկ համայնք՝ 2 ծրագիր
    1. Սարատակ և Պեմզաշեն բնակավայրերի ճանապարհների ասֆալտապատում:
    2. Արթիկ բնակավայրի Բաղրամյան փողոցի ասֆալտապատում և Գարեգին Նժդեհի փողոցի վերջնամասի մայթերի կառուցում:
  - ✓ Անի համայնք՝ 1 ծրագիր
    1. Սառնաղբյուր, Սարակապ, Հայկաձոր բնակավայրեր տանող ճանապարհների ասֆալտապատում :
  - ✓ Աշոցք համայնք՝ 2 ծրագիր
    1. Աշոցք բնակավայրի կենտրոնական հրապարակի ասֆալտապատման աշխատանքներ:

2. Աշոցք բնակավայրի 1-ին փողոց 1-ին անցուղու և հինգ բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքներ:

- Ապահովվել է բնակավայրերի տրանսպորտային ենթակառուցվածքի բարելավում, նվազեցվել սպասարկման ծախսերը և ապահովվել երկարաժամկետ տեխնիկական կայունություն:

Ներհամայնքային (տեղական նշանակության) փողոցների ու մայթերի կառուցում/վերակառուցում, հիմնանորոգում բնական քարով

Ներհամայնքային փողոցների և մայթերի կառուցումն ու վերակառուցումը բնական քարով հանդիսանում է համայնքային ենթակառուցվածքի զարգացման առաջնային ուղղություններից մեկը, որի նշանակությունը պայմանավորված է հետևյալով.

- **Տեղական ենթակառուցվածքի կայունություն** – բնական քարով հիմնանորոգված փողոցներն ու մայթերը ապահովում են երկարաժամկետ շահագործում, բարձր դիմացկունություն և նվազեցնում պարբերական վերանորոգման ծախսերը:
- **Տարածքային կապակցվածության ուժեղացում** – բարեկարգված փողոցներն ու մայթերը հեշտացնում են բնակավայրերի ներհամայնքային և միջհամայնքային տեղաշարժը, նպաստում համայնքների համաչափ զարգացմանը:
- **Տնտեսական ակտիվության խթանում** – բարեկարգված ենթակառուցվածքը աջակցում է տեղական բիզնեսի և գյուղատնտեսական արտադրանքի տեղաշարժին, նպաստելով տնտեսական աճին:
- **Սոցիալական հասանելիության բարձրացում** – բարեկարգված փողոցներն ու մայթերը հեշտացնում են բնակչության մուտքը կրթական, առողջապահական, վարչական և մշակութային ծառայություններին, բարձրացնելով կյանքի որակը:

Արդյունքային ցուցանիշներ.

- Ծրագրից օգտվել է **4477 մարդ:**
- Կառուցվել/վերակառուցվել է **8.6 կմ** երկարությամբ ճանապարհ, բնական քարով սալարկված մակերեսը՝ 35988 մ²:
- Ուղորտում իրականացվել է **2 ծրագիր (16 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **537,211,548 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **358,872,200 դրամ (66.8%):**

- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Արթիկ համայնք՝ 1 ծրագիր
    1. Սարալանջ, Նահապետավան, Սարատակ, Մեղրաշեն, Լուսակերտ, Հառիճ, Արթիկ, Գեղանիստ, Հովտաշեն, Գետափ, Մեծ Մանթաշ բնակավայրերի ներհամայնքային ճանապարհների տուֆ քարով սալապատում:
  - ✓ Աշոցք համայնք՝ 1 ծրագիր
    1. Սիզավետ, Սարագյուղ, Հարթաշեն, Գոգհովիտ, Մուսայելյան բնակավայրերի փողոցների տուֆ քարով սալարկում:
- Աշխատանքների արդյունքում ապահովվել է տեղական նշանակության փողոցների ու մայթերի տեխնիկական բարելավում, բարձրացվել բնակավայրերի ենթակառուցվածքի մակարդակը, և ապահովվել երկարաժամկետ կայունություն՝ բնական քարով հիմնանորոգման շնորհիվ:

Փողոցային լուսավորության համակարգի կառուցում/նորոգում

Փողոցային լուսավորության համակարգի կառուցումն ու նորոգումը կարևորությունը պայմանավորված է հետևյալով.

- **Ճանապարհային անվտանգության բարձրացում** – լուսավորված փողոցները նվազեցնում են ճանապարհատրանսպորտային պատահարների վտանգը և ապահովում բնակիչների անվտանգ տեղաշարժ, հատկապես գիշերային ժամերին:
- **Տարածքային կապակցվածության և շարժունակության խթանում** – բարեկարգված լուսավորությամբ փողոցները թույլ են տալիս անվտանգ և հարմար տեղաշարժ ինչպես ներհամայնքային, այնպես էլ միջհամայնքային ուղիներով, նպաստելով սոցիալական ակտիվությանը:
- **Տնտեսական զարգացում** – լուսավորված փողոցները ստեղծում են հարմար միջավայր առևտրի, ծառայությունների և ներդրումային գործունեության համար, խթանում տեղական տնտեսությունը:
- **Սոցիալական ծառայությունների հասանելիություն** – բարեկարգված լուսավորությունը հեշտացնում է բնակիչների մուտքը կրթական, առողջապահական, վարչական և մշակութային հաստատություններ, բարձրացնելով համայնքի կյանքի որակը:

- **Էներգախնայողություն և երկարաժամկետ կայունություն** – ժամանակակից, էներգախնայող համակարգերը նվազեցնում են սպասարկման ծախսերը, երկարացնում շահագործման ժամկետը և ապահովում ենթակառուցվածքի կայունություն:

Արդյունքային ցուցանիշներ.

- Կառուցվել/վերակառուցվել է 35 կմ երկարության լուսավորության համակարգեր, ընդգրկելով 1157 լուսատու:
- Ոլորտում իրականացվել է **3 ծրագիր (28 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **129,073,150 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **71,363,100 դրամ (55.3%):**
- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Արթիկ համայնք՝ 1 ծրագիր
    1. Արթիկ, Նոր Կյանք, Լուսակերտ, Սարալանջ, Հառիճ, Մեղրաշեն, Նահապետավան, Անուշավան, Փանիկ, Տուֆաշեն, Հովտաշեն, Հոռոմ բնակավայրերի լուսավորության ցանցի կառուցում:
  - ✓ Աշոցք համայնք՝ 1 ծրագիր
    1. Փոքր Սարիար, Կաքավասար, Թավշուտ, Սիզավետ, Զույգաղբյուր, Սալուտ և Արփենի բնակավայրերում լուսավորության համակարգի կառուցում:
  - ✓ Ամասիա համայնք՝ 1 ծրագիր
    1. Բյուրակն, Բանդիվան, Զորակերտ, Ծաղկուտ, Շաղիկ, Աղվորիկ, Արեգնադեմ, Գտաշեն և Մեղրաշատ բնակավայրերի փողոցային լուսավորության անցկացում:
- Աշխատանքների արդյունքում ապահովվել է համայնքների փողոցների անվտանգ երթևեկություն և բնակիչների անվտանգություն, բարձրացվել բնակավայրերի ենթակառուցվածքի որակը:

Բնակավայրերի գազաֆիկացում

Բնակավայրերի գազաֆիկացումը հանդիսանում է համայնքային ենթակառուցվածքի զարգացման ուղղություններից մեկը, որի նշանակությունը պայմանավորված է հետևյալով.

- **Տնտեսական արդյունավետություն** – բնական գազի մատչելիությունը նվազեցնում է էներգետիկ ծախսերը, խթանում է տեղական արդյունաբերության և ծառայությունների զարգացմանը, ապահովում է կայուն տնտեսական միջավայր:
- **Էներգետիկ անվտանգություն և կայունություն** – գազամատակարարումը ապահովում է էներգիայի մշտական և կանխատեսելի հոսք, նվազեցնում էներգահամակարգերի տեխնիկական կորուստները և էներգիայի այլ աղբյուրների նկատմամբ կախվածությունը:
- **Սոցիալական բարեկեցություն** – բնակիչները ապահովվում են հարմարավետ, էկոլոգիապես անվտանգ և մատչելի էներգիայով՝ բարելավելով կյանքի որակը, հատկապես գյուղական և սահմանամերձ համայնքներում:
- **Շրջակա միջավայրի պաշտպանություն** – բնական գազի օգտագործումը նվազեցնում է ածխաջրածնային և կոպտածխային արտանետումները, կանխում օդի և շրջակա միջավայրի աղտոտումը՝ ապահովելով կայուն տարածքային զարգացում:
- **Երկարաժամկետ ենթակառուցվածքային կայունություն** – արդիական գազաֆիկացիոն համակարգերը նվազեցնում են սպասարկման ծախսերը և ապահովում համայնքների էներգետիկ ու ենթակառուցվածքային կայունություն:

Արդյունքային ցուցանիշներ.

- Ծրագրից օգտվելու են **1726 տնային տնտեսություն:**
- Կառուցվել է **32.8 կմ** գազաֆիկացման համակարգեր:
- Ողորտում իրականացվել է **5 ծրագիր (9 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **628,937,392 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **336,966,500 դրամ (53.6%):**
- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Ախուրյան համայնք՝ 3 ծրագիր
    1. Փոքրաշեն բնակավայրի գազաֆիկացման աշխատանքներ:
    2. Ղարիբջանյան բնակավայրի գազաֆիկացման աշխատանքներ :
    3. Կառնուտ, Բասեն, Հովիտ, Ջրառատ բնակավայրերի սնող գազատարի կառուցում:
  - ✓ Արթիկ համայնք՝ 1 ծրագիր
    1. Մեծ Մանթաշ, Փոքր Մանթաշ, Հայրենյաց և Լեռնակերտ բնակավայրերի գազատարի ներքին ցանցի կառուցում:

- ✓ Աշոցք համայնք՝ 1 ծրագիր
    1. Կարմրավան և Զույգաղբյուր բնակավայրերի բնական գազի ներքին ցանցի կառուցում:

- Աշխատանքների արդյունքում ապահովվել է բնակավայրերի բնական գազի հասանելիություն, նվազեցվել է էներգիայի այլ աղբյուրների օգտագործումը, բարձրացվել է էներգետիկ արդյունավետությունը

Նախադպրոցական հաստատությունների կառուցում, վերակառուցում/նորոգում և գույքի, կահավորանքի ձեռքբերում

Նախադպրոցական հաստատությունների կառուցումն ու վերակառուցումը, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերումը հանդիսանում է համայնքային և մարզային զարգացման ռազմավարական հիմնասյուներից մեկը, որը նշանակությունը պայմանավորված է հետևյալով.

- **Կրթական հասանելիության և որակի բարձրացում** – նոր ու բարեկարգված նախադպրոցական հաստատությունները ապահովում են երեխաների համար անվտանգ և որակյալ կրթական միջավայր, նպաստելով մանկության զարգացմանը և նախապատրաստմանը դպրոցական կրթության համար:
- **Սոցիալական կայունություն** – մատչելի և բարեկարգված նախադպրոցական ծառայությունները աջակցում են ծնողների աշխատանքային և սոցիալական ակտիվությանը, նպաստում ընտանիքների և համայնքների կայունությանը, հատկապես գյուղական և սահմանամերձ տարածքներում:
- **Երկարաժամկետ ենթակառուցվածքային կայունություն** – արդիական և հուսալի կառույցներն ու գույքը ապահովում են հաստատությունների արդյունավետ շահագործում, նվազեցնում սպասարկման ծախսերը և երաշխավորում շարունակական ծառայություն:

Արդյունքային ցուցանիշներ.

- Ծրագրից օգտվելու են **266 երեխաներ:**
- Նորոգվել/բարեկարգվել է **24000 քմ** տարածք:

- Ուլորտում իրականացվել է **1 ծրագիր (6 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **113,525,152 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **77,237,400 դրամ (68%):**
- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Ախուրյան համայնք՝ 1 ծրագիր
    1. Հացիկ, Ջաջուռ, Ջաջուռավան, Վահրամաբերդ, Մարմաշեն, Շիրակ բնակավայրերի մանկապարտեզների տարածքների բարեկարգում, կեղտաջրերի հեռացման, ջեռուցման համակարգերի տեղադրման աշխատանքներ:
- Այսպիսով, նախադպրոցական հաստատությունների կառուցումն ու վերակառուցումը, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերումը ոչ միայն բարձրացնում է երեխաների և ընտանիքների կյանքի որակը, այլև հանդիսանում է համայնքի սոցիալական, տնտեսական և ենթակառուցվածքային զարգացման ռազմավարական գործիք:

Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգում, էներգախնայող միջոցառումների կիրառում

Բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի նորոգումն ու արդիականացումը, այդ թվում՝ էներգախնայող միջոցառումների կիրառումը, հանդիսանում է համայնքային կարևորիմնախնդիրներից մեկը, որը նշանակությունը պայմանավորված է հետևյալով.

- **Էներգախնայողություն և ծախսերի նվազեցում** – էներգախնայող միջոցառումները նվազեցնում են էներգիայի սպառումը և սպասարկման ծախսերը, բարելավում շենքերի տեխնիկական արդյունավետությունը և ապահովում երկարաժամկետ շահագործում:
- **Բնակչության կյանքի որակի բարձրացում** – նորոգված ընդհանուր գույքը ստեղծում է անվտանգ, հարմարավետ և բարեկարգ բնակավայր, բարձրացնում բնակիչների սոցիալական և կենցաղային բարեկեցությունը:
- **Տնտեսական ու ներդրումային հմայք** – արդիականացված շենքերը խթանում են տեղական շուկայական գործունեությունը, բարձրացնում բնակավայրերի ներդրումային գրավչությունը և նպաստում համաչափ զարգացմանը:

- **Երկարաժամկետ ենթակառուցվածքային կայունություն** – ընդհանուր գույքի նորոգումը ապահովում է շենքերի ինժեներական ու տեխնիկական կայունություն, նվազեցնում սպասարկման հաճախականությունը և ապահովում համայնքի ենթակառուցվածքի հուսալիություն:

Արդյունքային ցուցանիշներ.

- Ծրագրից օգտվել են **1452 բնակիչ:**
- Նորոգվել է **6868 քմ** մակերեսով շինություն:
- Ոլորտում իրականացվել է **2 ծրագիր (17 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **126,757,929 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **53,964,600 դրամ (42.6%):**
- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Արթիկ համայնք՝ 1 ծրագիր
    1. Արթիկ բնակավայրի թվով 13 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում:
  - ✓ Անի համայնք՝ 1 ծրագիր
    1. Մարալիկ բնակավայրի թվով 4 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքների վերանորոգման աշխատանքներ:
- Աշխատանքների արդյունքում ապահովվել է բազմաբնակարան շենքերի տեխնիկական կայունություն, բարձրացվել բնակչության կյանքի որակը, նվազեցվել սպասարկման ծախսերը և ապահովվել շենքերի երկարաժամկետ օգտագործման արդյունավետություն

Մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերում

Մեքենասարքավորումների, տեխնիկայի և գույքի ձեռքբերումը, հանդիսանում է համայնքային զարգացման կարևորագույն ուղղություններից մեկը, որի նշանակությունը պայմանավորված է հետևյալով.

- **Տնտեսական արդյունավետության բարձրացում** – նոր մեքենասարքավորումների և տեխնիկայի ձեռքբերումը բարձրացնում է համայնքային ծառայությունների արդյունավետությունը, խթանում տեղական ենթակառուցվածքի շահագործումն ու սպասարկումը և նվազեցնում շահագործման ծախսերը:

- **Հանրային առողջության և հիգիենայի ապահովում** – ժամանակակից տեխնիկայի և համապատասխան աղբամանների կիրառումը ապահովում է բնակավայրերի մաքրությունը, նվազեցնում հիվանդությունների և առողջապահական ռիսկերի հնարավորությունը։
- **Սոցիալական ծառայությունների բարելավում** – արդիական սարքավորումները թույլ են տալիս ապահովել ավելի որակյալ և մատչելի ծառայություններ բնակչությանը՝ բարձրացնելով կյանքի որակը և համայնքի սոցիալական կայունությունը։
- **Տեխնոլոգիական արդիականացում** – ժամանակակից տեխնիկայի ու սարքավորումների ներդրումը ապահովում է համայնքի ենթակառուցվածքի հուսալիություն, արդյունավետ շահագործում և երկարաժամկետ կայունություն։
- **Երկարաժամկետ ենթակառուցվածքային կայունություն** – արդիական տեխնիկան և սարքավորումները նվազեցնում են հնացած ենթակառուցվածքի վրա կախվածությունը և ապահովում համայնքի ծառայությունների շարունակականություն։

Այսպիսով, ծրագրերը ոչ միայն բարձրացնում են համայնքային ծառայությունների որակը, այլև հանդիսանում են համայնքի տնտեսական, սոցիալական և ենթակառուցվածքային զարգացման կարևոր ռազմավարական գործիք։

Արդյունքային ցուցանիշներ.

- Ձեռք է բերվել **3** մեքենասարքավորումներ և **460** գույք։
- Ուղորտում իրականացվել է **3 ծրագիր (3 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **199,490,000 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **121,805,500 դրամ (61.1%):**
- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Գյումրի համայնք՝ 1 ծրագիր
    1. Գյումրի համայնքի ՀՈԱԿ-ների և բակերի կարիքների համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում։
  - ✓ Ախուրյան համայնք՝ 2 ծրագիր
    1. Ախուրյան, Երազգավորս, Բայանդուր բնակավայրերի կարիքների համար ավտոգրեյդերի և մինի ամբարձչի ձեռքբերում։
    2. Ախուրյան, Երազգավորս, Բայանդուր բնակավայրերում աղբահանության աշխատանքների կազմակերպման համար

ճանապարհային բազմաֆունկցիոնալ մեքենայի և 300 հատ նոր անվավոր աղբամանների ձեռքբերում:

- Արդյունքում ապահովվել է համայնքների և կազմակերպությունների գործունեության արդյունավետության բարձրացում, աշխատանքների իրականացման արագացում և տեխնիկական միջոցների ժամանակակից ստանդարտներին համապատասխան համալրում:

Հասարակական շենքերի կառուցում/վերանորոգում և գույքի, կահավորանքի ձեռքբերում

Հասարակական շենքերի, այդ թվում մշակույթի տների, համայնքային կենտրոնների և այլ հաստատությունների կառուցումն ու վերանորոգումը, ինչպես նաև համապատասխան գույքի և կահավորանքի ձեռքբերումը հանդիսանում է համայնքային կարևորագույն ուղղություններից մեկը, որի նշանակությունը պայմանավորված է հետևյալով.

- **Սոցիալական և մշակութային ծառայությունների հասանելիության բարձրացում** – նոր կամ բարեկարգված հասարակական շենքերը հնարավորություն են ստեղծում համայնքի բնակիչների համար մշակութային, կրթական և հասարակական միջոցառումների մատչելիությանը, բարձրացնելով կյանքի որակը:
- **Համայնքային կյանք և համերաշխության խթանում** – հասարակական կենտրոններն ապահովում են բնակիչների ակտիվ մասնակցությունը համայնքային գործունեությանը, նպաստում սոցիալական կապերի զարգացմանը և համայնքի միասնության ամրապնդմանը:
- **Տնտեսական և ներդրումային հմայք** – արդիական և լավ կահավորված շենքերը բարձրացնում են բնակավայրերի ներդրումային գրավչությունը, խթանում տեղական մշակութային և ծառայողական գործունեությունը:
- **Երկարաժամկետ ենթակառուցվածքային կայունություն** – ժամանակակից շենքերի ու գույքի ներդրումը նվազեցնում է սպասարկման ծախսերը և ապահովում հաստատությունների արդյունավետ շահագործում երկար տարիներ:

Արդյունքային ցուցանիշներ.

- Կառուցվել/վերանորոգվել է **886 քմ** մակերեսով շինություն:
- Ընդհանուր իրականացվել է **2 ծրագիր (4 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **77,591,985 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **38,796,000 դրամ (50%)**:

- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Արթիկ համայնք՝ 1 ծրագիր
    1. Սարալանջ համայնքի մշակույթի տան վերանորոգում։
  - ✓ Աշոցք համայնք՝ 1 ծրագիր
    1. Ձորաշեն, Սարապատ և Կաքավասար բնակավայրերի համայնքային կենտրոնների վերակառուցում։
- Այսպիսով, ծրագրերը ոչ միայն բարելավում են համայնքի մշակութային և սոցիալական միջավայրը, այլև հանդիսանում են համայնքի տնտեսական, սոցիալական և ենթակառուցվածքային զարգացման կարևոր գործիք։

Այգիների և պուրակների կառուցում/բարեկարգում

Այգիների և պուրակների կառուցումն ու բարեկարգումը հանդիսանում է համայնքային զարգացման կարևորագույն հիմնախնդիրներից մեկը, որի նշանակությունը պայմանավորված է հետևյալով.

- **Սոցիալական բարեկեցություն և առողջ ապրելակերպ** – նոր կամ բարեկարգված այգիները և պուրակները ապահովում են բնակիչների համար անվտանգ, հանգստի և ժամանցի հարմարավետ տարածք, նպաստում ֆիզիկական ակտիվության և սոցիալական ակտիվության բարձրացմանը։
- **Համայնքային կյանքի խթանում** – կանաչ տարածքները նպաստում են բնակիչների ինտերակտիվությանը, համայնքային միջոցառումների և մշակութային իրադարձությունների կազմակերպմանը, ամրապնդում համայնքային միասնականությունը։
- **Շրջակա միջավայրի պահպանություն** – այգիների և պուրակների կանաչ տարածքների զարգացումը նպաստում է էկոլոգիական կայունությանը, օդի որակի բարելավմանը և բնական միջավայրի պահպանմանը։
- **Տնտեսական և ներդրումային գրավչություն** – կանաչ, բարեկարգված տարածքները բարձրացնում են բնակավայրերի գրավչությունը, խթանում զբոսաշրջությունը և տեղական բիզնեսի զարգացումը։
- **Երկարաժամկետ կայունություն** – ժամանակակից կանաչ տարածքների ձևավորում և պահպանություն ապահովում է համայնքի միջավայրի հուսալիություն և կայուն զարգացում երկար տարիներ։

Արդյունքային ցուցանիշներ.

- Կառուցվել/բարեկարգվել է **9970 քմ** մակերեսով տարածք։
- Ոլորտում իրականացվել է **1 ծրագիր (1 ենթածրագիր)**, ընդհանուր արժեքը՝ **45,286,502 դրամ**, որից ՀՀ կառավարության համամասնությունը կազմում է **18,114,600 դրամ (50%)**:
- Ծրագրերը իրականացվել են հետևյալ համայնքներում.
  - ✓ Գյումրի համայնք՝ 1 ծրագիր
    1. Կուրսկի այգու բարեկարգման աշխատանքներ։
- Այսպիսով, այգիների և պուրակների կառուցման և բարեկարգման ծրագրերը ոչ միայն բարելավում են բնակիչների կյանքի որակը, այլև հանդիսանում են համայնքի սոցիալական, տնտեսական և էկոլոգիական զարգացման կարևոր ռազմավարական գործիք։

2. ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզը շարունակում է հանդիսանալ զբոսաշրջության ոլորտում զարգացման կայուն աճ արձանագրող մարզերից մեկը՝ պահպանելով և զարգացնելով իր պատմամշակութային, ճարտարապետական, բնապահպանական և գաստրոնոմիական ներուժը։ Զբոսաշրջությունը մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական ուղղություններից է և էական դեր ունի զբաղվածության ապահովման, տեղական բիզնեսի զարգացման և ներդրումային միջավայրի բարելավման գործում։

2025 թվականին զբոսաշրջության զարգացման քաղաքականությունը իրականացվել է ՀՀ Շիրակի մարզի զբոսաշրջության զարգացման հայեցակարգին համապատասխան՝ առաջնահերթություն տալով հետևյալ ուղղություններին՝

- քաղաքային զբոսաշրջություն
- պատմաճարտարապետական զբոսաշրջություն
- գաստրոտուրիզմ
- ակտիվ և արկածային զբոսաշրջություն
- գյուղական և էկո զբոսաշրջություն

Ենթակառուցվածքային զարգացում

2025 թվականին շարունակվել և ավարտական փուլ են մտել նախորդ տարիներին մեկնարկած մի շարք ծրագրեր՝ ուղղված զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավմանը։

Գյումրի քաղաքի զբոսաշրջային միջավայրի զարգացում

- Շարունակվել են Գյումրի քաղաքի պատմական հատվածի փողոցների և մայթերի վերակառուցման աշխատանքները։
- Բարելավվել է արտաքին լուսավորությունը և տեղադրվել զբոսաշրջային ուղղորդող տեղեկատվական վահանակներ։
- Ընդլայնվել է հետիոտնային գոտիների ցանցը։

«Բարեկամություն» այգու զարգացում

Գյումրու «Բարեկամություն» այգու վերակառուցման ծրագիրը 2025 թվականին շարունակվել է որպես քաղաքային զբոսաշրջության առանցքային նախագիծ։

- Գործարկվել են հանգստի և ժամանցի նոր գոտիներ։
- Ձմեռային սահադաշտը դարձել է սեզոնային զբոսաշրջության խթանման կարևոր գործոն։
- Վերնիսաժի տաղավարները նպաստել են տեղական արտադրողների և արհեստագործների եկամուտների աճին։

Միջազգային և դրամաշնորհային ծրագրեր

Տեղական Տնտեսության և Ենթակառուցվածքների Զարգացման Ծրագիր

Շարունակվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագիրը, որի շրջանակում՝

- բարելավվել են զբոսաշրջային նշանակության ճանապարհները,
- իրականացվել են ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի արդիականացման աշխատանքներ զբոսաշրջային ենթածրագրերի տարածքներում,
- խրախուսվել են մասնավոր ներդրումները հյուրանոցային և ագրոբիզնես ոլորտներում։

«LEAD4Shirak» ծրագիր

Ծրագիրը շարունակվել է 2025 թվականին՝ նպաստելով գյուղական համայնքների տնտեսական ակտիվացմանը։

- ձևավորվել և գործարկվել են տեղական ակտիվ խմբեր,
- ֆինանսավորվել են զբոսաշրջային և գյուղական բիզնես նախաձեռնություններ,
- ստեղծվել են նոր աշխատատեղեր,
- ապահովվել է կանանց և երիտասարդների ակտիվ մասնակցություն:

Ներդրումային ծրագրեր

Մարզում շարունակվել են մասնավոր ներդրումային ծրագրերը՝ ուղղված

- հյուրանոցային համալիրների կառուցմանը և վերանորոգմանը,
- էկո և գյուղական տուրիզմի օբյեկտների ստեղծմանը,
- հանգստյան գոտիների և ակտիվ զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացմանը:

2025 թվականին արձանագրվել են հետևյալ արդյունքները.

- Զբոսաշրջիկների հոսքի աճ նախորդ տարվա համեմատ:
- Ստեղծված նոր աշխատատեղեր զբոսաշրջության ոլորտում:
- Ֆինանսավորված նոր նախաձեռնություններ գյուղական համայնքներում:
- Զբոսաշրջային ենթակառուցվածքների բարելավված օբյեկտներ:

2025 թվականի գործունեության ծրագիր՝

https://www.canva.com/design/DAG53X3V7f8/dJxdnZqLipa939HOWMRFpA/view?utm_content=DAG53X3V7f8&utm_campaign=designshare&utm_medium=link2&utm_source=uniquelinks&utlId=h1290ccee2a